Արձանագրություն N 3
<<ՔՆ -ԲԸՀԱՇՁԲ-16/2>> ծածկագրով ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի ք. Երևան, Մանանդյան 41 հասցեի մարզահամալիրի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

26 սեպտեմբերի 2016թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանց /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան /գնահատող/, Մ. Սարգսյան /բացող /, Ա. Քոչարյան / գնահատող /
Բացակայում էր՝ Ն. Մխոյան/բացող

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

I.Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Սարգսյանց)

1. Ընդունել ի գիտություն որ.

- <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի, մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՔՆ -ԲԸՀԱՇՁԲ-16/2>> ծածկագրով բանակցային ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված՝ <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

- Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

II. Բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Սարգսյանց)

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- ներկայացված աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

- Ներկայացված որակավորման պաստաթղթերի հավելվածները կնքված և ստորագրված չեն մասնակցի կողմից:

Համաձայն Կարգի 51-րդ կետի՝ ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Համաձայն Կարգի 52-րդ կետի՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Սարգսյանց)

- Հանձնաժողովի հաջորդ՝ նիստը հրավիրել 2016 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը՝ 11:40-ին: ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Սարգսյանց

Անդամներ՝ ---------- Ն. Մարտիրոսյան

---------- Մ. Սարգսյան

---------- Ա. Քոչարյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան